ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կրթություն

Մարզում գործում է 48 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 2 առանձնացված ավագ դպրոց Եղեգնաձոր, Վայք քաղաքներում և 1 կրթահամալիր Ջերմուկ քաղաքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ: Այդ դպրոցներում սովորում է 812 աշակերտ:

45 դպրոց գործում են մարզային ենթակայությամբ, որոնցից 31-ը միջնակարգ են, 14-ը՝ հիմնական: Մարզային ենթակայությամբ գործող 45 դպրոցներում սովորում է 5997 աշակերտ, աշխատում են 946 ուսուցիչներ, իսկ ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողների թիվը 323 է: ՈՒսուցիչների շուրջ 90%-ը (850 ուսուցիչ) ունեն բարձրագույն կրթություն:Դասարանի միջին խտությունը կազմում է 12 աշակերտ: Մարզի բոլոր դպրոցներն անցել են համընդհանուր ներառական կրթության:

48 դպրոցներից 19-ը ջեռուցվում է գազի լոկալ կաթսայատան միջոցով, 1-ը (Խաչիկի միջն.) կոշտ վառելիքով աշխատող լոկալ կաթսայատան միջոցով, մնացած 28 դպրոցները էլեկտրական ջեռուցիչներով:

Դպրոցներում գործում են 17 նախակրթարաններ, որոնցում ընդգրկված է 173 երեխա:

Համայնքային ենթակայությամբ գործում են 17 մանկապարտեզներ, որոնցում ընդգրկված է 1269 երեխա:

Կատարված աշխատանքներ

1. Դպրոցներից հավաքագրվել և կազմվել է մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական համակազմի ցանցային տվյալները 2021թ. հունվարի 1-ի և 2021թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ: Այն մարզպետի կողմից հաստատվելուց հետո ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:
2. Ստուգվել և մարզպետի հաստատմանն է ներկայացվել հանրակրթական դպրոցների 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ և 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակների տարիֆիկացիոն ցուցակները:
3. Կազմակերպվել, անցկացվել և ամփոփվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին մասնակցել են 9-12–րդ դասարանների 512 աշակերտներ, որոնցից 48-ը իրավունք են ստացել մասնակցելու հանրապետական փուլին.
4. 9-րդ դասարանի հայոց լեզվի կենտրոնացված քննությունը անցկացնելու համար նախապատրաստվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ուղարկվել քննական կենտրոնների տեղաբաշխման հետ կապված առաջարկություններ, ինչպես նաև 9-րդ դասարանի շրջանավարտների անվանացանկը: Այն կազմել է 499:
5. Ապահովվել է դպրոցներից պահանջվող տվյալների մուտքագրումը ԿՏԱԿ-ի (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն) կողմից ստեղծված կառավարման էլեկտրոնային համակարգ:

6. Շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերի լրացման համար կազմվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել 12-րդ դասարանի շրջանավարտների ճշտված անվանացանկը (այդ թիվը 265 է):
7. Կազմակերպվել և անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների պետական ավարտական քննությունները:
8. Ստացվել և դպրոցներին է բաշխվել 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերը (ատեստատներ, վկայականներ):
9. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել կորած ավարտական փաստաթղթերի (ատեստատներ, վկայականներ) կրկնօրինակների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք ստացվել և հանձնվել են դպրոցներին:
10. Որպես դիտորդ վարչության մասնագետները մասնակցել են դպրոցներում անցկացվող ուսուցչի և դպրոցի գործադիր տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթներին: Սահմանված կարգով տնօրեններ են ընտրվել Սարավանի, Հորսի, Սալլիի հիմնական, Ջերմուկի թիվ 3, Արփիի, Արտաբույնքի, Ազատեկի, Աղնջաձորի, Մալիշկայի թիվ 2, Քարագլխի, Գնդեվազի միջնակարգ դպրոցներում:
11. Դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման նոր կարգի համաձայն կազմակերպվել և անցկացվել է միացյալ և առանձին խորհուրդների ձևավորումը և նրա անվանական կազմը հաստատման է ներկայացվել մարզպետին: Ձևավորվել է 13 միացյալ և 7 առանձին խորհուրդներ: Նրանցում ընդգրկվել են 305 անդամներ:
12. Մարզպետի հանձնարարությամբ 3 աշխատանքային խմբերով կազմակերպվել են այցելություններ մարզի բոլոր դպրոցներ, որի արդյունքում կազմվել են զեկուցագրեր և ներկայացվել մարզպետին:
13. Մարզի դպրոցականներն ապահովվել են դասագրքերով: Ստացվել է վարձույթով տրվող 7079 կտոր դասագիրք: Վարձավճարները հավաքագրվել է 102%-ով, որը կազմում է 19.798.785 դրամ:
14. Կազմակերպվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների խորհրդակցություն, որտեղ քննարկվել է մոդուլ մանկապարտեզների (կարճաժամկետ) կազմակերպման, սաների ընդունելության կարգը:
15. Նախատեսվում է Եղեգիս համայնքում կառուցել 144 երեխայի համար մոդուլ մանկապարտեզ:
16. Հանրակրթական դպրոցների կողմից ընդունվել և ամփոփ հայտի ձևով ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել տարրական դասարանների 2021 թվականին դասագրքերի թվաքանակի վերաբերյալ տեղեկույթ: Ստացվել և բաշխվել է պետբյուջեի ֆինանսավորմամբ տպագրվող 12669 կտոր դասագիրք:
17. Ավարտվել է փաստաթղթային ատեստավորման աշխատանքները, ատեստավորվել է 121 ուսուցիչ:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մարզում գործում են՝

Երկու թանգարաններ՝ ,,Գլաձորի պատմամշակութային արգելոց թանգարան,, ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան մարզային ենթակայությամբ: Գերատեսչական ենթակայությամբ երկու պատկերասրահ՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում: Մեկ երաժշտական դպրոց մարզային ենթակայությամբ, և չորս արվեստի դպրոցներ համայնքային ենթակայությամբ՝ Վայք, Ջերմուկ, Արենի համայնք գ. Աղավնաձոր:

Մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում սովորողների թիվը 732 է, իսկ դասավանդողների թիվը 92: Երկու ՄՍԿ (մանկական ստեղծագործական կենտրոն) Վայք և Եղեգնաձոր քաղաքներում: Մեկ գեղարվեստի դպրոց (65 աշակերտ 5 մանկավարժ) Եղեգնաձոր քաղաքում:

Գործում է 36 գրադարան համայնքային ենթակայությամբ, իսկ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ մեկ գրադարան, Եղեգնաձոր քաղաքում:

Համայնքային ենթակայությամբ գործում է 30 մշակույթի տուն, մարզային ենթակայությամբ մեկ մշակույթի տուն Եղեգնաձոր քաղաքում: Ներկա դրությամբ մշակութային միջոցառումներ հնարավոր է կազմակերպել և անցկացնել վերը նշված մշակույթի տներից 14-ում, մնացածները խիստ վերանորոգման կարիք ունեն:

Կատարված աշխատանքներ

1. <<Բանակի օր>>, <<Կանանց միջազգային օր>>, <<Մայրության և գեղեցկության տոն>>, Արվեստի դպրոցներում կիրառական արվեստի փառատոն, Ապրիլի 23-ի երեկոյան երթ ջահերով, դեպի Եղեռնի անմեղ զոհերի հիշատակի խաչքար, իսկ 24 ին մասսայական միջոցառում՝ պատարագ եկեղեցում և ծաղկեդնում խաչ քարի մոտ:

2. Մայիսի 8-ին պսակադրություն զոհված ազատամարտիկների և Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշահամալիրներում:

3.Ապրիլի 18-ին մարզի պատմամշակութային հուշարձաններում կազմակերպվել է <<Հուշարձանների պահպանության միջազգային օրվան նվիրված>> սանիտարական մաքրման աշխատանքներ:

4.Մայիսի 28-ին Եղեգնաձորի մշակույթի տան դահլիճում անցկացվեց հայրենասիրական երգերի և պարարվեստի փառատոն:

5.Օգոստոսի 12-ին երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ մարզի մի շարք համայնքներում կազմակերպվել են վոլեյբոլի, ֆուտբոլի և հեծանվավազքի մրցույթներ, իսկ երեկոյան Եղեգնաձորի ամֆիթատրոնում՝ դիսկօտեկ, Եղեգնաձորի մշակույթի տան էստրադային նվագախմի մասնակցությամբ:

6.Անկախության տոնին նվիրված միջոցառումների շրջանակում.

ա. Շարադրությունների մրցույթ <<Ես սիրում եմ իմ հայրենիքը>> մարզի հանրակրթական դպրոցներում,

բ. << Կոմիտասյան օրեր>> երաժշտական և արվեստի դպրոցներում,

գ. Սեպտեմբերի 21-ին՝ համերգ Եղեգնաձորի ամֆիթատրոնում:

7.Սեպտեմբերի 25-ին և 26-ին մարզի տարբեր մշակութային օջախներում նշվեցին <<Եվրոպական ժառանգության օրեր>> միջոցառումը, որը կրում էր <<Համընդգրկուն ժառանգություն>> խորագիրը:

8. Սեպտեմբերի 28-29 ին թանգարանային ցուցադրություններ՝ ծանոթություն Վայոց ձորի պատմությանն ու մշակույթին:

9. Դեկտեմբերի 18-ին <<Մենք քեզ հետ ենք Հայոց բանակ>> հեղինակային երգի երեկո:

10.Դեկտեմբերի 29-ին փոքրիկների համար կազմակերպվել է տարեվերջյան տոնական հանդես <<Բարի գալուստ 2022>> խորագրով:

ՍՊՈՐՏ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Կատարված աշխատանքներ

1.Կազմակերպվել է ՀՀ պետական մարմինների աշխատակիցների միջև անցկացվող հրաձգության հանրապետական մրցույթ, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի, Մալիշկայի և Գլաձորի համայնքապետարանների հավաքական թիմերի մասնակցությամբ:

2.Շախմատի հուշամրցաշարեր՝ նվիրված զոհված ազատամարտիկների հիշատակին, անվանի մարզիկների հիշատակին և այլն:

3. Կարատեի հուշամրցաշար՝ նվիրված զոհված ազատամարտիկ Վարդան Վարդանյանի հիշատակին:

4. Ֆուտբոլի հուշամրցաշար՝ նվիրված 44-օրյա պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակին:

5. Կազմակերպվել է երիտասարդության մասնակցությունը <<Կանաչ կիրակի>> և <<Ուխտագնացություն դեպի Սպիտակավոր և Թանահատի հուշահամալիրներ>> միջոցառումներին:

6. Օգոստոսի 5-ից 15-ը ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ անցկացվել է պատանիների (չորս տարիքային խումբ) ֆուտբոլի մարզային փուլի առաջնություն, 180 պատանի ֆուբոլիստների մասնակցությամբ: Վաղթող թիմերն արժանացել են ՀՀ Վայոց մարզպետի կողմից սահմանած մրցանակների:

7.Մարզի հավաքականը 2021թ. սեպտեմբերի 19-ին Գեղարքունիքի մարզում մասնակցել է <<ՀՀ Վարչապետի գավաթ>> սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարին:

8.Հոկտեմբերի 30-ին 23 հոգուց բաղկացած մարզի հավաքականը մասնակցել է <<ՀՀ Վարչապետի գավաթ սիրողական կրոսավազքին>>, որտեղ Արենի համայնքի ներկայացուցիչ Նիկիտա Ծատուրյանը 1500 մասնակիցների մեջ գրավե է 9-րդ տեղը և արժանացել 75.000 դրամ պարգևի: